ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-37-Ո-97
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԻՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ՉԱՓՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏՎՅԱԼ ՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ դատավորի և նրա ընտանիքի անդամների համար լայն սոցիալական երաշխիքների (սոցիալ-տնտեսական ապահովության, բնակարանային, սոցիալական ծառայությունների և այլն) օրենսդրորեն ամրագրումը և իրականության մեջ դրանց ապահովումն ուղղակիորեն կապված են դատավորի լիարժեք անկախությունն ապահովելու հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասով, 94-րդ հոդվածի 1-ին մասով, 166-րդ հոդվածի 12-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին՝ Կառավարության կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետներում տվյալ վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում տրամադրելու դեպքերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 13
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի 2018թ.
սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-37-Ո-97
որոշման

ԻՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ՉԱՓՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏՎՅԱԼ ՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դատավորին բնակարանի վարձի փոխհատուցում տրամադրվում է իր մշտական բնակության վայրից դուրս դատավորի պաշտոնում նշանակվելու դեպքում:

2. Իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին տվյալ վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցումը տրամադրվում է, երբ դատավորի աշխատավայրը գտնվում է իր մշտական բնակության վայրից ավելի քան 30 կմ հեռավորության վրա:

3. Փոխհատուցումը տրամադրվում է դատավորի՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից սահմանված կարգով և չափով: Դիմումում նշվում է նաև դատավորի մշտական բնակության վայրի հասցեն, վարձակալած բնակարանի հասցեն, ինչպես նաև ներառվում է դատավորի հայտարարությունն այն մասին, որ համապատասխան աշխատավայրում նա կամ նրա հետ համատեղ բնակվող անձինք չունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակարան:

4. Վարձակալության պայմանագրի փոփոխման, ինչպես նաև փոխհատուցման տրամադրման հիմքերի վերացման պահից դատավորն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին: